ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԱՊՐԻԼԻ 2025 թվականի N 0554-Ա

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի և Մանյա Աթոյան Գրիգորի Ա/Ձ-ի միջև 2025թ.-ի հունվարի 20-ին կնքվել է համաձայնագիր, որով ուժի մեջ է մտել 2025թ.-ի հունվարի 17-ին կնքված ԱՔ-ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/1-8 ծածկագրով գնման պայմանագիրը: Քանի որ մասնակցի կողմից ներկայացվել է գրություն, որով հրաժարվել է Պայմանագրով նախատեսված ապրանքներից 33-րդ չափաբաժնի մատակարարումից, պատվիրատուն որոշում է կայացրել ԱՔ-ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/1-8 ծածկագրով գնման պայմանագիրը նշված չափաբաժնի մասով մասնակի միակողմանի լուծել և մասնակցին հնարավորություն տալ վճարելու պայմանագրի և որակավորման ապահովումները, սակայն սահմանված ժամկետում մասնակցի կողմից վճարում չի կատարվել, ուստի.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Մանյա Աթոյան Գրիգորի Ա/Ձ-ին (ՀՎՀՀ՝ 49811276, հասցեն՝ Արմավիր) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ ի հայտ են եկել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության դրույթներով նախատեսված հիմքերը՝ «խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը»:
2. Օրենքով սահմանված կարգով սույն որոշումը ներկայացնել լիազորված մարմին և մասնակցին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. ապրիլի 25
ք. Արմավիր